թիւնը, որ կը տեսնենք յետոյ, գրուած է ՉԼԸ թուին, նորա կեանքի 67ՐԴ տարին։ «ՉԼԹ. յամսեանն Հոռի, Դ., և Փետրվարի, Ժ. աւրն շաբաթ ի տաւնի սբ. Սարգսին, ի թագաւորութեան հայոց Հեթմու, ի հայրապետութեն. տն. Ստեփանոսի, ի բռնակալութեն. ազգին նեստորաց Աբղուն խանին ի Թավրէզ» նշանակուած է Գրիգոր Բալուեցու նահատակութիւնը, նորա աշակերտ և ականատես քրոջորդու կողմից։ Ժամանակագրական այս տուեալների հիման վերայ Մխիթարի մահը պէտք է նշանակենք վերջին թուականից ոչ յետոյ և մօտաւորապէս 68 տարեկան հասակում, որով և ծննդեան տարին կարող ենք 1222 թուականը նշանակել։ Ցամենայն դէպս նա մասնակից չէր ընդդէմ Անաւարզեցու կազմուած ձեռնարկին 1295 թուին որ անկարելի կը լինէր, եթէ կենդանի լինէր, իբրև մօտ անձնաւորութիւն Պռոշեանց տան, որի ներկայացուցիչ իշխանները Օրբելեանների հետ ներկայ էին(*)։

(*) Աւելի մանրաման հիմնաւորում այս մտքերի տ. մեր վերոյիշեալ աշխատութեան § 7։

Նորա հնագոյն գործը պիտի համարել Ճառընտիրը, գոնէ սկզբնաւորութեան տեսակէտով, թէև մի եւ նոյն ժամանակ նա զբաղուած էր և իւր ժամանակագրութեամբ, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ։ Մխիթարի Ճառընտիրը մեր գրչութեան արուեստի առաջնակարգ երևոյթներից մէկն է, ոչ իւր արտաքին ճոխութեամբ կամ զեղեցկութեամբ, այլ հարուստ բովանդակութեամբ. տարաբաղդաբար վերջից պակաս է. ոչ միայն վերջին զլխաւոր յիշատակարանը չկայ, այլ և ձեռագրի մասեր. բայց այժմ էլ մի պատկառելի գործ է, 1118 թերթանոց, 35,5×24 սմ. մեծութեամբ, երկսիւն՝ իւրաքանչիւրը 28½×9,8 սմ.։ Նիւթը թուղթ է, շատ տեղ փափկած, կարկատուած։ Գրուած է շեղագրին մօտ անցման բոլորգրով Մխիթարի ձեռքով (պատկեր 161)(*)։ Սարգիս անունով մի գրիչ լուսանցքներում պարզ, միայն կինեվարիումով զարդերունի (պատկեր 162–163), նշանակելով երբեմն իւր ա-



Պատկեր 161.

(*) Ձեռագրի համառօտ նկարագրութիւնը տ. մեր Գրչութեան Աբուլեսոը Գ. § 101. իսկ բովանդակութեան մասին Տաշեան. Ցուցակ. 548։